Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

ԽՍՀՄ համայնավար կուսակցության գլխավոր քարտուղար և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Ս. Գորբաչովը շնորհակալական նամակ է հղել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Էմիլիո Կաստրոյին և Եվրոպական Եկեղեցիների Համաժողովի գլխավոր քարտուղար Ժան Ֆիշերին Հայաստանում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի առիթով ցուցաբերած քրիստոնեական և մարդասիրական վերաբերմունքի համար.

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊՐՆ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊՐՆ. ԺԱՆ ՖԻՇԵՐ

Ընդունեցեք խորին շնորհակալություն այն բանի համար, որ ԵՀԽ-ն և ԵԵՀ-ն, առաջնորդվելով եղբայրության, գթասրտության և վշտակցության զգացումներով, բանիվ և գործով արձագանքեցին հայ ժողովրդի ողբերգական աղետին: Ձեր կոչով բազմաթիվ երկրների կրոնական կազմակերպություններ պատրաստակամություն հայտնեցին թեթևացնել աղետի ենթարկված մարդկանց տառապանքը, օգնել՝ կյանքի նորմալ պայմաններ վերականգնելու երկրաշարժի ենթարկված շրջաններում: Հայաստանի վիշտը արձագանք գտավ մեր մոլորակի բոլոր մարդկանց սրտերում, հավատացյալ և ոչ հավատացյալ, և առիթ դարձավ մարդկային բարձրագույն զգացումների աննախադեպ պոռթկումին:

Այդպիսի բարեսիրական պոռթկումով հաստատվում է, որ ազգերի ճակատագիրը ընդհանուր է՝ անկախ գաղափարական, կրոնական և ուրիշ տարբերություններից մարդկանց միջև, որ նրանք պատրաստ են դիմագրավել տարերային աղետները և ուրիշ համընդհանուր վտանգներ: Սրանով բացահայտվում է Նոր մտածողության որոշակի արտահայտությունը, ինչպես նաև աշխարհում տեղի ունեցող դրական փոփոխությունների համոզիչ վկայությունը:

Օգտվում եմ առիթից անձնապես իմ անունից արտահայտելու իմ համերաշխության զգացումը Ձեր՝ անհատական գործունեությանը և Ձեր գլխավորած Եկեղեցիների գործունեությանը՝ աշխարհի խաղաղության և մարդկանց երջանկության համար:

Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎ